Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-248 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածի «ե» կետը շարադրել ~~հետևյալ~~ *նոր* խմբագրությամբ.

«ե) պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորած պետական կառավարման մարմնի գանձապետարանում (այսուհետ՝ գանձապետարան) բացում է հաշիվներ (համայնքային կազմակերպության դեպքում՝ բանկում կամ գանձապետարանում).»:

Հոդված 2. Բանկերում պետական ոչ առևտրային կազմակերպությունների անունով բացված հաշիվները պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորած պետական կառավարման մարմնի գանձապետարան տեղափոխելու ժամանակացույցը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ *սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում*:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Formatted: Font: Italic

Formatted: Font: GHEA Grapalat

Formatted: Afrikaans

Formatted: Font: Italic